ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ г. АЛАВЕРДИ
REPUBLIC OF ARMENIA REGION OF LORI
MUNICIPALITY OF ALAVERDI

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա
1702, Алаверди, З. Андраника 8А
1702, Alaverdi, Z. Andraniki 8A
☎ (253) 2-41-00
Fax (253) 2-41-00
E-mail: alaverdi@alaverdi.am
URL: www.alaverdi.am

№ 258

«31» 03 2011թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Ալավերդի համայնքի ավագանու 2011թ. թիվ 11-Ա, թիվ 12-Ա, թիվ 13-Ա, թիվ 14-Ա, թիվ 15-Ա, թիվ 16-Ա որոշումները:

Առդիր՝ 9 էջ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կատ.՝ Ա. Էվոյան
2-41-02

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 11-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.03.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեում
փոփոխություն կատարելու մասին.
(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի ավագանիների ասոցիացիա» հասարակական կազմակերպության 15.03.2011թ. N 04 գրությունը՝ ասոցիացիային ֆինանսական աջակցության մասին

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից (բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51, h/h 900262577027, հոդված 4891) 30.0 հազ. դրամ հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառի այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների նվիրատվությունների ծախսերին (բաժին 01, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121057, հոդված 4819):

Որոշումն ընդունվել է. 8 կողմ, 1 դեմ:

| | | | |
|---|---|---|---|
| 1. ԱԲԵԼՅԱՆ | ՄԵՐՈՒԺԱՆ | կողմ | |
| 2. ԷՎՈՅԱՆ | ԳԱԳԻԿ | դեմ | |
| 3. ԹԱՆԴԻԼՅԱՆ | ՀՐԱՉՅԱ | կողմ | |
| 4. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ | ՀԱԿՈԲ | կողմ | |
| 5. ՄԻՐԶՈՅԱՆ | ՌՈՒԶԱՆՆԱ | կողմ | |
| 6. ՍԱՐԳՍՅԱՆ | ՀՐԱՆՏ | կողմ | |
| 7. ՍԻՄՈՆՅԱՆ | ԿԱՐԵՆ | կողմ | |
| 8. ՎԱՐՈՍՅԱՆ | ԿԱՄՈ | կողմ | |
| 9. ՏԻՏԱՆՅԱՆ | ԱՐՄԱՆ | կողմ | |

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա.Վ. ԷՎՈՅԱՆ**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 12-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.03.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեում
փոփոխություն կատարելու մասին.
(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ձմռան ամիսներին սառցակալման հետևանքով Ակներ թաղամասի ջրամատակարարման ցանցի որոշ հատվածներում խողովակաշարերը վնասվել են ու ջրի արտահոսքը մեծացել է

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ակներ թաղամասի ջրամատակարարման ներքի ցանցի վերանորոգման նպատակով Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից (բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51, h/h 900262577027, հոդված 4891) 146.5 հազ. դրամ հատկացնել բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառի ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերին (բաժին 06, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121222, հոդված 4251):

Որոշումն ընդունվել է միաձայն.

1. ԱԲԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԷՎՈՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ
9. ՏԻՏԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա.Վ. ԷՎՈՅԱՆ**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  ԹԻՎ 13-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.03.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեում
փոփոխություն կատարելու մասին
(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ 2011թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին կառավարության 2010թ. դեկտեմբերի 23-ի թիվ 1748-Ն որոշմամբ «Ալավերդու Ռ. Մելիքյանի անվան երաժշտական դպրոց» և «Ալավերդու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-երի ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսման համար ՀՀ 2011թ. պետական բյուջեով հատկացված միջոցների բաշխումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեի եկամտային մասում նախատեսել պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացում (սուբվենցիա)՝ 2649.6 հազ. դրամ (բաժին 37, խումբ 4, հ/հ 900265121450)
2. 2011թ. բյուջեի ծախսային մասում կրթության բնագավառի արտադպրոցական դաստիարակության գծով ծախսերն ավելացնել 2649.6 հազ. դրամով (բաժին 09, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121297, հոդված 4637), այդ թվում «Ալավերդու Ռ. Մելիքյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի համար նախատեսված ընթացիկ դրամաշնորհներն ավելացնել 1324.8 հազ. դրամով (բաժին 09, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121297, հոդված 4637) և «Ալավերդու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի համար նախատեսված դրամաշնորհներն ավելացնել 1324.8 հազ. դրամով (բաժին 09, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121297, հոդված 4637)։
3. «Ալավերդու Ռ. Մելիքյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի համար նախատեսված ծախսերն ըստ եռամսյակների բաշխել հետևյալ համամասնությամբ.

| | |
|---|---|
| I եռամսյակ | 265.0 հազ. դրամ |
| II եռամսյակ | 622.7 հազ. դրամ |
| III եռամսյակ | 953.9 հազ. դրամ |
| IV եռամսյակ | 1324.8 հազ. դրամ |

4. «Ալավերդու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի համար նախատեսված ծախսերն ըստ եռամսյակների բաշխել հետևյալ համամասնությամբ.

| | |
|---|---|
| I եռամսյակ | 265.0 հազ. դրամ |
| II եռամսյակ | 622.7 հազ. դրամ |
| III եռամսյակ | 953.9 հազ. դրամ |
| IV եռամսյակ | 1324.8 հազ. դրամ |

Որոշումն ընդունվել է միաձայն.

1. ԱԲԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԷՎՈՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ
9. ՏԻՏԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա.Վ. ԷՎՈՅԱՆ**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 14-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.03.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեում
փոփոխություն կատարելու մասին
(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ օրենքները «Ֆինանսական համահարթեցման մասին» ու «ՀՀ 2011թ. պետական բյուջեի մասին» և ՀՀ օրենքների կիրառման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների փոխհատուցմանը համապատասխան Ալավերդի համայնքի համար նախատեսված դոտացիայի ճշտված գումարը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2011թ. բյուջեում կատարել դոտացիայի ճշտում՝ բյուջեում նախատեսված դոտացիայի գումարը 196013.8 հազ. դրամ պակասեցնել 61.1 հազ. դրամով և 2011թ. բյուջեի եկամտային մասում նախատեսել դոտացիա 195952.7 հազ. դրամ, այդ թվում՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա - 195244.2 հազ. դրամ, պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիա (ՀՀ օրենքների կիրառման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող կորուստների փոխհատուցվող գումար) - 708.5 հազ. դրամ:
2. Կատարել պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող 195244.2 հազ. դրամ դոտացիայի եռամսյակային բաշխման ճշտում, այդ թվում՝ ըստ եռամսյակների

| | |
|---|---|
| I եռամսյակ | 48811.0 հազ. դրամ |
| II եռամսյակ | 97622.1 հազ. դրամ |
| III եռամսյակ | 146433.1 հազ. դրամ |
| IV եռամսյակ | 195244.2 հազ. դրամ |

3. Կատարել պետական բյուջեից տրամադրվող 708.5 հազ. դրամ այլ դոտացիայի եռամսյակային բաշխման ճշտում, այդ թվում՝ ըստ եռամսյակների

| | |
|---|---|
| I եռամսյակ | 177.1 հազ. դրամ |
| II եռամսյակ | 354.2 հազ. դրամ |
| III եռամսյակ | 531.3 հազ. դրամ |

4. 2011թ. բյուջեի եկամտային մասում հողի վարձակալությունից եկամուտներն ավելացնել 61.1 հազ. դրամով և հիմք ընդունելով 2011թ. բյուջեի եկամտային մասում կատարվող փոփոխությունները, բյուջեի եռամսյակային բաշխման համամասնությունն ապահովելու նպատակով հողի վարձակալությունից եկամուտների եռամսյակային բաշխման մեջ կատարել համապատասխան ճշտում:

Որոշումն ընդունվել է միաձայն.

1. ԱԲԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԵՎՈՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ
9. ՏԻՏԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա.Վ. ԵՎՈՅԱՆ**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 15-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.03.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կառուցապատման նպատակով սահմանված մեկնարկային գներով հողամասերի աճուրդ-վաճառք կատարելու մասին

(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել կատարելու համայնքի վարչական տարածքում գտնվող բնակավայրի ներքոհիշյալ հողամասերի աճուրդ-վաճառք կառուցապատման նպատակով սահմանված մեկնարկային գներով.

1. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա փողոցից դեպի գծանց իջնող կրպակների շարքում գտնվող հասարակական կառուցապատման համար 20.0 քմ հողամասը՝ 17000 դրամ մեկնարկային գնով:
2. Ալավերդի քաղաքի Էվոյան փողոցի թիվ 1ա շենքի հարավային մասում գտնվող հասարակական կառուցապատման համար 48.0 քմ հողամասը՝ 40800 դրամ մեկնարկային գնով:
3. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթի «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի հյուսիս-արևելյան մասում գտնվող 54.0 քմ հողամասը՝ ավտոտնակ կառուցելու համար՝ 28620 դրամ մեկնարկային գնով:
4. Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու «Դարբ-Վարս» ՍՊԸ-ի շենքի արևմտյան մասում գտնվող 300.0 քմ հողամասը՝ հասարակական կառուցապատման համար՝ 255000 դրամ մեկնարկային գնով:
5. Ալավերդի քաղաքի Սանահին Կայարան թաղամասի թիվ 14 շենքի հյուսիս-արևելյան մասում գտնվող 41.5 քմ հողամասը՝ հասարակական կառուցապատման համար՝ 21995 դրամ մեկնարկային գնով:
6. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթի 2/30 շենքի արևելյան մասում գտնվող 16.0 քմ հողամասը՝ հասարակական կառուցապատման համար՝ 8480 դրամ մեկնարկային գնով:

7. Ալավերդի քաղաքի Խուդյակով փողոցի թիվ 2 շենքի հյուսիսային մասում գտնվող 28.2 քմ հողամասը՝ հասարակական կառուցապատման համար՝ 23970 դրամ մեկնարկային գնով:

Որոշումն ընդունվել է միաձայն.

1. ԱԲԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԷՎՈՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ
9. ՏԻՏԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 16-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.03.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքային սեփականություն հանդիսացող շինությունը անհատույց օգտագործման տրամադրելու մասին
(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող ք. Ալավերդի Սանահին Սարահարթի 2/32ա հասցեում գտնվող սպորտային դահլիճը շաբաթական 4 անգամ 3-ական ժամով 2 տարի ժամանակով անհատույց օգտագործման հանձնել «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին:
2. Շաբաթվա օրերը և ժամերը կարող են լինել փոփոխական և պետք է համաձայնեցվեն «Ալավերդու ըմբշամարտի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրինության հետ: Համաձայնագիրը հանդիսանալու է «Գույքի անհատույց օգտագործման» պայմանագրի անբաժանելի մասը:

Որոշումն ընդունվել է միաձայն.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | ԱԲԵԼՅԱՆ | ՄԵՐՈՒԺԱՆ | 6. ՍԱՐԳՍՅԱՆ | ՀՐԱՆՏ |
| 2. | ԵՎՈՅԱՆ | ԳԱԳԻԿ | 7. ՍԻՄՈՆՅԱՆ | ԿԱՐԵՆ |
| 3. | ԹԱՆԴԻԼՅԱՆ | ՀՐԱՉՅԱ | 8. ՎԱՐՈՍՅԱՆ | ԿԱՄՈ |
| 4. | ՃՈՒՂՈՒՐՅԱՆ | ՀԱԿՈԲ | 9. ՏԻՏԱՆՅԱՆ | ԱՐՄԱՆ |
| 5. | ՄԻՐԶՈՅԱՆ | ՌՈՒԶԱՆՆԱ | | |

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա.Վ. ԵՎՈՅԱՆ**